ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ. 648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.130՝ 96.5 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ.11112015-01-0180 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լիպարիտ Ավետիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.130՝ 96.5 քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի առաջատար մենակատար Լիպարիտ Ավետիսյանին:

Լիպարիտ Ավետիսյանը ծնվել է 1990 թվականին Երևանում: Վաղ հասակից ընտանիքով տեղափոխվել է բնակության Ղրիմի Թեոդոսիա քաղաք, որտեղ ավարտել է տեղի երաժշտական դպրոցի վոկալի բաժինը: Հետագայում սովորել է Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան կոնսերվատորիայում՝ Բ. Կուդրյավցևի դասարանում, այնուհետև վերադարձել է Երևան և ուսումը շարունակել Երևանի պետական կոնսերվատոիայում՝ Ռաֆայել Հակոբյանցի դասարանում: Նա բազմաթիվ մրցանակների դափնեկիր է՝ Լեհաստանում «Գրանդ Տենորներ»-ի մրցույթ-փառատոն՝ երկու հատուկ մրցանակ (2015թ.), Հելսինկիում «Միրյամ Հելին» երգիչների 7-րդ միջազգային մրցույթ՝ դիպլոմ (2014թ), Մոսկվայի «Աշխարհի մուսա» միջազգային մրցույթ երկրորդ մրցանակ (2010թ) և այլն: Վերջինս 2014 թվականին ճանաչվել է տարվա լավագույն օպերային երգիչ:

Լիպարիտ Ավետիսյանը հայ կատարողական դպրոցի մերօրյա նվիրական և սիրելի անուններից է: Օժտված է կատարողական բարձր վարպետությամբ և իր բոլոր ելույթներով զարդարում է հայ և միջազգային բեմերը: Այսօր հանդես է գալիս Հայաստանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տարբեր օպերային դերերգերով, որոնք մշտապես վերածվում են մշակութային տոնախմբության՝ արժանացնելով երգչին ունկնդիրների բարձր գնահատականներին: Հայ տենորը մշտապես փնտրված է համերգային նախաձեռնությունների ծրագրերում՝ ոչ միայն հայրենական բեմահարթակների վրա, այլ նաև սահմաններից դուրս՝ հիացնելով օտար հանդիսատեսին հայրենական կատարողական արվեստի պրոֆեսիոնալ, բարձրարժեք դրսևորումով:

Լիպարիտ Ավետիսյանը ապրում և ստեղծագործում է Երևանում, բնակվում է ծնողների, կնոջ և զավակների հետ համատեղ Բաբայան փողոցի հ.34 շենքի հ.30 բնակարանում՝ վարձակալական հիմունքներով և հանդիսանում է բնակարանային պայմանների կարիքավոր:

Հաշվի առնելով բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը՝ ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ